

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«ԻԴԻԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցին.

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԻԴԻԱՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա Կազմակերպության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներին:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք վերապահումով աուդիտորական կարծիք աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020թ. հունիսի 19-ի մեր եզրակացությունում: Վերապահումը վերբերվում է այն բանին, որ Ընկերությունը պետք է համախմբեր դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները, քանի որ դուստր ընկերությունը վերահսկվում է Ընկերության կողմից, չնայած, ղեկավարության գնահատմամբ, համախմբման արդյունքում

դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների համախմբումն էականորեն չի ազդի
Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Ելնելով դուստր ընկերությանը
վերաբերող բավարար տեղեկատվության բացակայությունից, մենք չենք կարող գնահատել, թե
արդյո՞ք դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների համախմբման արդյունքում
Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կենթարկվեին էական փոփոխությունների:

*Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության
պատասխանատվությունը*


Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտ անցած ամփոփ ֆինանսական
հաշվետվությունների՝ ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքների համաձայն
պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով 810 «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների
վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»
ստանդարտին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա՝
արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները
բոլոր էական առումներով համահունչ են աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

19 հունիսի 2020թ.



Լիդա Թադեոսյան
Աուդիտի ղեկավար